Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 27-ի N 220-Ա որոշման

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N __/____

Սույն բյուջետային երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ կառավարության ____ թվականի ____-ի N ____ որոշմամբ հաստատված ____ նպատակով «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի (գրանցման համարը՝ 264.120.07314, իրավաբանական անձի ծածկագիր՝ 39167012, ՀՎՀՀ՝ 00091919, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Կենտրոն, Վազգեն Սարգսյան փողոց 26/1, այսուհետև՝ Պրինցիպալ) կողմից «Արդշինբանկ» ՓԲԸ-ից, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ից, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ից, «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից և «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ից (այսուհետ միասին՝ Բենեֆիցիար/ներ) ընդհանուր 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով ներգրավվող սինդիկացիոն վարկից (տրամադրված ————թ. կնքված թիվ ——— Սինդիկացիոն վարկային պայմանագրի շրջանակներում, այսուհետ՝ Սինդիկացիոն պայմանագիր) մինչև 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկի մայր գումարի և ոչ ավել, քան 6 ամսվա գծով հաշվեգրված տոկոսագումարների վերադարձի ապահովման միջոց՝ մարումներն առաջնային կարգով Երաշխիքով ապահովված պարտավորությունների մարմանն ուղղելու պայմանով: Երաշխիքով ապահովված պարտավորությունները չեն ներառում վարկի գծով հաշվարկված (կիրառված) տուժանքի (տույժեր, տուգանքներ) մարումները:

Երաշխիքով Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) Սինդիկացիոն վարկային պայմանագրով սահմանված վարկի մարման ժամանակացույցին համապատասխան Բենեֆիցիարին վճարել մինչև 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ԱՄՆ դոլարից, որը

ներառում է Սինդիկացիոն պայմանագրով սահմանված վարկի գումարը և 6 ամսվա գծով հաշվեգրված տոկոսագումարների գումարը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից իր պահանջում նշված բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով:

Սույն Երաշխիքով վճարման պահանջ կարող է ներկայացվել վարկի գծով 30 օր և ավելի ժամկետանց վճարային (պարտքային) պարտավորությունների առկայության դեպքում և չափով՝ մինչև Երաշխիքի ժամկետի լրանալը: Սույն երաշխիքի իմաստով ժամկետանց վճարային (պարտքային) պարտավորություն է համարվում Սինդիկացիոն վարկային պայմանագրով սահմանված վարկի մարման՝ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցված ժամանակացույցից 30 օր և ավելի կետանցը:

Սույն Երաշխիքն անհետկանչելի է: Սույն Երաշխիքը գործում է մինչև Սինդիկացիոն պայմանագրով սահմանված Պրինցիպալի պարտավորությունների ամբողջական կատարումը, սակայն ոչ ավելի, քան մինչև Սինդիկացիոն պայմանագրով սահմանված վարկի մարման վերջնաժամկետից հետո 6 ամսվա լրանալու ամսաթիվը: Ընդ որում, սույն պարբերությամբ նախատեսված ժամկետը հաշվարկելիս Սինդիկացիոն պայմանագրով սահմանված վարկի մարման վերջնաժամկետի երկարաձգման՝ սույն Երաշխիքը թողարկելուց հետո կատարված փոփոխությունները հաշվի չեն առնվում:

Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջը ներկայացվում է Սինդիկացիոն պայմանագրով սահմանված Գործակալի կողմից, որը լիազորված է հանդես գալ Բենեֆիցիարների անունից: Պահանջին կից ներկայացվում են Բենեֆիցիարի կողմից Պրինցիպալին տրամադրված վարկի գծով 30 օր և ավելի ժամկետանց վճարային (պարտքային) պարտավորության հաշվարկը (բացվածքը) և պահանջը ներկայացնող Գործակալի լիազորությունները հավաստող փաստաթուղթը/երը:

Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը տասն աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝

ա) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

բ) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն Երաշխիքը թողարկվել է ____ թվականի ____-ին՝ մեկ բնօրինակից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ